

2016 թվականին ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից իրականացված միջոցառումներ

ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում 2016 թվականին ուսումնական մասով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1) Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար

ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում 2016 թվականին 90 խմբերի համար կազմակերպվել է 1595 ակ/ժամ (ծրագրով նախատեսված էր 1200 ակ/ժամ) ընդհանուր տևողությամբ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և թեստավորվել է 1972 հարկային և մաքսային ծառայող:

2) Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների (նաև ԼՂՀ հարկային և մաքսային ծառայողների) և հարկ վճարողների համար

Ուսումնական կենտրոնում 2016 թվականին հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպվել է 549 ակ/ժամ տևողությամբ ուսումնական 67 դասընթաց, որոնց մասնակցել է 1251 հարկային և մաքսային ծառայող, իսկ առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց համար կազմակերպվել է 376 ակ/ժամ տևողությամբ 18 դասընթաց, որոնց մասնակցել է 290 ունկնդիր:

Այլ ուսումնական միջոցառումներ

2016 թվականի ընթացքում Ուսումնական կենտրոնի հետ համատեղ անցկացվել է 573 ակ/ժամ տևողությամբ 5 միջոցառում, որոնց մասնակցել է 163 ունկնդիր (հարկային, մաքսային ծառայողներ, այլ գերատեսչությունների աշխատակիցներ, հարցազրույցի արդյունքում ընտրված քաղաքացիներ): Մասնավորապես՝

- Մինչև 2016թ-ի մարտի 10-ը Ուսումնական կենտրոնը շարունակել է ՀՀ սահմանային անցման կետերում աշխատանքի ընդունելու համար անցկացված հարցազրույցի արդյունքում ընտրված քաղաքացիների (1-ին և 2-րդ խմբեր) համար կազմակերպված դասընթացների անցկացումը, որոնց մասնակցել է 69 ունկնդիր,
- 2016թ փետրվարի 16-ից 19-ը Ուսումնական կենտրոնում Համաշխարհային մաքսային կազմակերպություն հետ համատեղ կազմակերպվել է «Մաքսային ծառայողի մասնագիտական էթիկա և կոռուպցիայի դեմ պայքար» թեմայով աշխատաժողով

Աշխատաժողովի տևողությունը կազմել է 21 ակ/ժամ, որին մասնակցել են 25 մաքսային ծառայողներ:

- 2016 թվականի փետրվարի 23-ից 25-ը Ուսումնական կենտրոնում Համաշխարհային մաքսային կազմակերպություն հետ համատեղ կազմակերպվել է **«Ռիսկերի գնահատում (ֆիզիկական անձանց/ուղեվորների վարքագիծ եվ հոգեբանական դիմանկար)»** թեմայով Աշխատաժողովի տևողություն կազմել է 21 ակ/ժամ, որին մասնակցել են 20 մաքսային ծառայողներ:

- 2016 թվականի ապրիլի 25-ից 29-ը Ուսումնական կենտրոնում Համաշխարհային մաքսային կազմակերպություն հետ համատեղ կազմակերպվել է **«Վերանայված Կիտոյի կոնվենցիա»** թեմայով աշխատաժողով: Աշխատաժողովի տևողություն կազմել է 21 ակ/ժամ, որին մասնակցել են 24 մաքսային ծառայողներ:

- 2016թ հոկտեմբերի 26-ից Ուսումնական կենտրոնը սկսել է ՀՀ սահմանային անցման կետերում աշխատանքի ընդունելու համար անցկացված հարցազրույցի արդյունքում ընտրված քաղաքացիների (3-րդ և 4-րդ խմբեր) համար դասընթացների կազմակերպումը, որոնց մանսակցում է 25 ունկնդիր: Դասընթացի ավարտը հրամանի համաձայն նախատեսված է 2017 թվականի փետրվարի 21-ին:

3) Հաշվապահների համար կազմակերպված միջոցառումներ

- 2016 թվականի փետրվարի 15-ից ապրիլի 27-ը և մարտի 21-ից հունիսի 3-ը Ուսումնական կենտրոնում կազմակերպվել են «ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահների որակավորման քննություններին մասնակցելու» թեմայով նախապատրաստական դասընթացներ՝ 100-ական ակ/ժամ տևողությամբ, որին ընդհանուր թվով մասնակցել են 30 մասնակիցներ:

4) Միջազգային համագործակցություն

2016 թվականի ընթացքում Ուսումնական կենտրոնը շարունակել է համագործակցությունը միջազգային կառույցների հետ, միաժամանակ ուղիներ փնտրելով գտնելու համագործակցության նոր հնարավորություններ:

2016 թվականին Ուսումնական կենտրոնի կազմում իր գործունեությունը հաջողությամբ շարունակել է շախմատի գրոսմայստերական դպրոցը, որտեղ 4 խմբերով 8 ընտրված մասնակիցների համար կազմակերպվել են շախմատի դասընթացներ: